վախճանիւք 'ի վերայ բանականութեան մերոյ բայց Տեառն և արարիչն մեր, և մեք ունենալով զօրութիւն հոգւոյ մերոյ պահելոյ զպատիւ բնութեան մերոյ գործօք ձեռաց մերոց թագաւորել 'ի վերայ անասունն կենդանեաց, և թագաւոր մեզ առնել 'ի վերայ բնական բնութեան մերոյ, ոչ թէ յիշխելով 'ի վերայ միմեանց, այլ սիրելով զընկերս մեր և հնազանդելով բարեգոյն Օրինաց մերոց որում ընտրեմք մեք վասն մեր բոլորովին բարին և ընդունիմք վարել զկեանս մեր ըստ սահմանի Օրինաց մերոց. այս Օրէնս ցոյէ միայնակ մեզ թագաւոր, որ արգելէ ընթացս մեր 'ի գործոց չարութենէ 'ի ձեռանէ պատժոյ յօրինաց մերոց, և լայն արձակ թողցէ բնութիւնս մեր գործել զբարիս որ քան կարն անդամոց և զօրութիւն հոգւոյ մերոյ խոսատանայցէ, այսու սասանի չարիք և գործ փոփոխական բնութեանց մերոյ, և Օրինօք վարեմք զկեանս մեր 'ի յերեսս երկրի պատուօք և ազատութեամբ և ամենայնիւ դիւրութեամբ՝ գանձելով գանձս մեր 'ի հանդերձելումն յաւիտենական կեանս զի սովաւ գոցուք որդեգրութիւն 'ի Հօրէ Արարչէ մերմէ, զի գործ ձեռաց նորայ եմք, զի հարկ 'ի վերայ մեր կայ զի գործ ձեռաց մերոց գոցէ արժանի պատուոյն արարչին մերոյ, այլ զայս ամենայն ձգտելով 'ի միտս մեր և ծանօթանալով զօրութեամբ հոգւով մերով և տեսա-